Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի մարտի 20-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն)

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/2>>

Պատվիրատուն՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, որը գտնվում է **ք. Երևան, Կորյունի 2** հասցեում, ստորև ներկայացնում է **<<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/2>>** ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում 1: Ձեր թթվածնային բալոնները ի՞նչ ստանդարտի են կամ ո՞ր երկրի արտադրանք են, քանի որ տարբեր ստանդարտների կամ երկրների բալոնների փականները տարբեր են:

Հարցադրման ստացման ամսաթիվ 1: 17.03.2017թ.

Պարզաբանում 1: Թթվածնային բալոնները հանդիսանում են խորհրդային միության և Ռուսաստանի Դաշնության արտադրանք:

Հարցադրում 2: Խնդրում եմ պարզաբանել նաև տեխնիկական բնութագրի N 11 կետը, այն է՝ 3-րդ ձևի ձևակերպում:

Հարցադրման ստացման ամսաթիվ 2: 17.03.2017թ.

Պարզաբանում 2: Ձև 3-ը <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ում գրանցված և գազաբալոնների փորձաքննություն իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպության կողմից ՀՀ կառավարության 28 սեպտեմբերի 2005 թվականի N 2388-Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացված փորձաքննության եզրակացության ձևն է:

Հարցադրում 3: Խնդրում եմ պարզաբանել նաև տեխնիկական բնութագրի N 12 կետը, այն է՝ առանձին լիցքավորում /փորձարկում/ (այսինքն բալոնները պետք է մատակարարվեն թթվածնով լիցքավորված, թե՞ դատարկ):

Հարցադրման ստացման ամսաթիվ 3: 17.03.2017թ.

Պարզաբանում 3: Բալոնները պետք է մատակարարվեն լիցքավորված վիճակում:

Հարցադրում 4: Խնդրում եմ պարզաբանել արդյո՞ք պարտադիր պայման է տեխնիկական բնութագրի N6 կետը, այն է՝ բալոնի պատի հաստության ուլտրաձայնային հաստաչափով չափումը (եթե բալոնները կշռվել են ու հիդրավլիկ փորձարկվել):

Հարցադրման ստացման ամսաթիվ 4: 17.03.2017թ.

Պարզաբանում 4: Տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր աշխատանքների իրականացումը պարտադիր է:

Սույն հատարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **060-621-249:**

Էլ. փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com:**

Պատվիրատու՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**

<<20>> մարտի 2017թ.